# Բաց Նամակ Համայն Հայությանը

## *Մելգոնյան Կրթական Հաստատության փակումը համահայկական խնդիր է*

### *ՕԳՆԵ՛Ք ՄԵԶ ՓՐԿԵԼՈՒ ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՓԱԿՎԵԼՈՒՑ ԿԱՄ ԾԱԽՎԵԼՈՒՑ*

«Հայ Բարեգործական Ընդհանուր Միության» (ՀԲԸՄ) ղեկավարությունից պահանջում ենք ամենայն պատասխանատվությամբ վերանայել իր որոշումը: Հայ դպրոցի փակումը սփյուռքյան պայմաններում հարված է հայ ժողովրդի ազգային գերագույն շահերին: ՀԲԸ Միությունը թող հավատարիմ մնա իր իսկ անվան կոչմանը՝ «բարեգործական» առաքելությանը:

Մարտի 16-ին հրապարակված երկրորդ հայտարարությամբ ՀԲԸՄ կենտրոնական վարչությունն «ավետում էր», որ արդեն որոշվել է վաճառել Մելգոնյան Կրթական Հաստատության (ՄԿՀ) տարածքը, իսկ ստացվելիք գումարի հաշվին՝ Նիկոսիայում հիմնադրել հայագիտական հետազոտությունների կենտրոն: Այս որոշումը նույնքան վտանգավոր ու ազգադավ ծրագիր է, որքան ՄԿՀ փակումն ու վաճառքը: Լավ գիտենք, որ ենթադրյալ «հայագիտական կենտրոնը» ում է ծառայելու՝ ամերիկյան «դպրոցի» հակահայկական աշխարհաքաղաքական ծրագրերին:

Փաստորեն հայկական ուսումնական հաստատության վաճառքի գումարով, հիմնվում է մի այնպիսի կենտրոն, որի ուսումնասիրությունները ուղղակի ու անուղղակի օգտագործվելու են հայ ժողովրդի միասնական նպատակների դեմ:

Աթաթուրքը թեև շատ հայերի կոտորեց, բայց հայկական դպրոց չփակեց:

*Արախ*